# ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

*Մայիս ամսուան մէջ պատահած բազմաթիւ դէպքերը բաւական նիւթ կը մատակարարեն մեզի՝ այս անգամուան քաղաքական տեսութիւնը հետաքրքրական լրերով զարդարելու: Այս լրերն աւելի խաղաղական են՝ քան պատերազմական, թէեւ մերթ ընդ մերթ չեն պակսիր վրդովիչ լրեր եւ պատերազմական երկիւղներ:*

*Արդէն լրագիրք աշխարհ ամենայն սփռած են, թէ Փրանկիսկոս Յովսէփ Ա. Աւստրիոյ-Հունգարիոյ Վեհափառ Կայսրն ու Թագաւորն այս տարի իւր գահակալութեան քառասնամեայ տարեդարձը պիտի կատարէ: Սոյն պատճառաւ մեծամեծ հանդիսութիւնք եւ յայտարարութիւնք բոլոր երկրին մէջ կը կատարուին եւ դեռ պիտի կատարուին իւր պատուոյն համար:*

*Վեհափառ Կայսրն ինքնին ուզելով սոյն տարին պատմութեան տարեգրոց մէջ արձանացընել եւ իւր որդիական զգացմանց եւ մեծարանաց ցոյց ընել՝ որոշեց որ տարիներէ վեր սկսուած Մարիամ Թերեզիա Կայսրուհւոյն եւ այժմեան Հապսպուրկեան-Լոթրինկեան ծիւղին հիմնադրին արձանն ու յիշատակարանը Մայիս 13ին ամենայն կայսերական շքեղութեամբ բացուի: Արդարեւ աւելէ աւելի նշանակալից դէպք մը չէր կրնար սոյն քառասնամեայ յոբելեանն անմահացընել: Աւստրիա պարտական է իւր մեծութիւնն այս տաղանդաւոր Իշխանուհւոյն: Ինք դրաւ հիմն իւր զինուորական մեծութեան, մտաւոր յառաջացման. ինք գեղեցկացուց զՎիեննա. միով բանիւ ինքն եղաւ օրինակ եւ առաջնորդ ոչ միայն իւր յաջորդաց, այլ եւ ամենայն իշխանաց եւ իշխանուհեաց աշխարհի, որոնք պաշտած էին անոր անհամեմատ ձիրից եւ հպատակներն լաւ կառավարելուն եւ անոնցմէ անչափ սիրուելուն վրայ: Հոս յառաջ բերենք Փրեդերիկոս Բ. Բրուսիոյ Թագաւորին խօսքը. "Մարիամ Թերեզիա, կ'ըսէ Փրեդերիկոս, իւր գահուն եւ իւր սեռին պատիւ բերաւ. իբրեւ կին այնպիսի գործեր ի գլուխ հանեց, որ վայել են առն մեծի„:*

*Մայիս 13ին Վեհափառ Կայսրը՝ բոլոր կայսերական գերդաստանին, պետութեան բովանդակ եկեղեցական եւ աշխարհական մեծամեծաց եւ բազմաթիւ հանդիսատեսաց ներկայութեամբը, բացաւ շքեղ եւ ճարտարարուեստ յիշատակարանն, որ միջոցին քաղքին բոլոր զանգակները սկսան հնչել, զինուորական երաժշտախմբերն ազգային եղանակը զարնել, թնդանօթներ եւ հրազէններ արձակուիլ:*

*Յիշատակարանը կը ներկայացընէ զՄարիամ Թերեզիա իւր արքունական գահուն վրայ բազմած՝ արքունական զաւազանը ձեռքը, բարձրաբերձ յիշատակարանին գագաթը: Անոր պատուանդանին չորս անկիւնները երիվար հեծած կը տեսնուին Մեծ Կայսրուհւոյն անուանի չորս զօրավարները՝ Լաւտոն, Տաւն, Դրաւն եւ Քեվէնհիւլլէր: Անոնցմէ վեր դարձեալ պատուանդանին վրայ կը կենան նոյն անմահ Կայսրուհւոյն քաղաքական անուանի անձինքները՝ Քաունից դիւանադպիրը, Լիխդէնշդայն սպարապետը, Հաւկվից իրաւագէտն եւ Սվիէդէն բնապատումը: Կան անոնցմէ զատ խումբ խումբ 17 անձանց պատկերներ, ի մէջ այլոց՝ Գլուք, Հայտն ու Մոզարդ համբաւաւոր երաժշտաց: Ամբողջ յիշատակարանը նայողին վրայ մեծ տպաւորութիւն կ'ընէ եւ կը զարթուցանէ վերստին այն յիշատակները, զոր Մարիամ Թերեզիա Աւստրիոյ մէջ եւ բովանդակ տիեզերաց վրայ թողուցած է:*

*Այս հանդիսութեան երկրորդ օրը Վեհափառ Կայսրը բացաւ Ստորին Աւստրիոյ Արուեստահանդէսն, որ ի պատիւ Վեհափառ Կայսեր գահակալութեան քառասնամեայ տարեդարձին յարդարուած է: Թէեւ Արուեստահանդէսը մասնական է, սակայն այնպիսի գեղեցիկ ճաշակաւ եւ այնչափ բազմաթիւ առարկաներով զարդարուած է, մինչեւ կրնանք փոքրիկ համաշխարհական Արուեստահանդէս անուանել:*

*Աւստրիոյ մէջ այսպիսի հանդէսներ կատարուած ժամանակ՝ որոնք բնականաբար երկրի մը խաղաղական դիտմանց մեծ յայտարարներն են, խորհրդանոցներն իրենց գործերն արտաքոյ կարգի բանակռիւներով յառաջ կը տանէին: Յունիսի սկիզբները պիտի գոցուին խորհրդանոցք, որովհետեւ նոյն ամսոյն 9ին պատգամաւորութիւնները պիտի գումարին Արտաքին գործոց եւ Պատերազմի պաշտօնէից տեղեկագիրները լսելու եւ իրենց պահանջած դրամական գումարները տալու համար:*

*Մայիսի 26ին Հունգարիոյ խորհրդանոցին մէջ հարցուեցաւ Թիսա պաշտօնէից գահերէցին, թէ ինչո՞ւ տէրութիւնը Գաղղիոյ համաշխարհական Արուեստահանդիսին չ'ուզեր մասնակցիլ եւ թէ ինչո՞ւ մասնակցողաց նիւթապէս պիտի չօգնէ: Թիսա պատասխանեց, թէ տէրութիւնն ամենեւին չ'արգելուր առանձնականաց Արուեստահանդիսին մասնակցիլ, բայց ինք ոչ կ'օգնէ, ոչ ալ խորհուրդ կու տայ մասնակցելու. վասն զի նախ առանձնականք մասնակցելով այնպէս մը պիտի երեւայ, թէ Հունգարիոյ բովանդակ ճարտարարուեստը ներկայացուած ըլլայ, որ կարծեմ. ըսաւ, մեր երկրին պատուոյն չի նպաստեր. երկրորդ այժմեան քաղաքական դրութիւնը, որուն վրայ արդէն ոմանք շատ անգամ խօսած են, նոյնպէս նաեւ Գաղղիոյ արդի վիճակը: Անոնք յառաջ բերելով ոչ կ'ուզենք զԳաղղիա վշտացընել, ոչ ալ Գաղղիոյ խաղաղական դիտաւորութեանց վրայ տարակուսիլ. միայն խոհեմութիւնը կամ պարագաները մեզի այսպէս խորհրդածել ու գործել կու տան:*

*Այս է Թիսայի պատասխանին բովանդակութիւնը: Բայց իւր թշնամիները սոյն պատասխանին կարեւոր մասերը կրճատելով եւ իրենց անձնական խորհրդածութիւններն յաւելլով լրագրաց մէջ տարածեցին. եւ նոյնպիսի եղանակաւ նաեւ Գաղղիա հեռագրեցին: Անոր վրայ գրեթէ բոլոր Գաղղիոյ լրագիրք զայրացած սկսան Թիսայի եւ Աւստրիոյ-Հունգարիոյ դէմ սպառնալից եղանակաւ խօսիլ եւ սոյն խօսակցութիւնը մեծ յանդըգնութիւն եւ թշնամանք Գաղղիոյ դէմ համարիլ. մինչեւ որ Գաղղիոյ դեսպանը Քալնոքի կոմսէն խօսակցութեան բուն իմաստն իմանալով եւ համոզուելով որ անոր մէջ Գաղղիոյ դէմ ամենեւին ոչ թշնամանք եւ ոչ դիտում կայ, ծանոյց Կոպլէ Արտաքին գործոց պաշտօնէին, որ իւր կողմանէ խորհրդանոցն եւ հետեւաբար ժողովուրդը հանդարտեցուց:*

---

*Գերմանիոյ Կայսեր հիւանդութիւնը սակաւիկ ինչ մեղմացած է, այնպէս որ կրնանք հաստատել, թէ առ ժամն մահացու վտանգէն ազատած է. սակայն այժմէն չի կրնար գուշակուիլ հիւանդութեան ապագային մէջ ինչպիսի ընթացք ունենալիքը:*

*Բաւական ժամանակէ ի վեր Գերմանիոյ տէրութիւնն Էլզասի մէջ գրգռութիւն կը նշմարէր, որուն առջեւն առնլու համար խիստ կարգադրութիւն մը դրաւ որ Գաղղիայէն Էլզաս անցնող Գաղղիացւոց անցագիրները խստիւ քննուին: Յիրաւի այս նոր կարգադրութիւնը Գաղղիացիները գրգռեց եւ իրենք ալ սկսան պահանջել որ աւելի խիստ կարգադրութիւններ դրուին Գերմանացւոց դէմ, սակայն Կոպլէ պաշտօնեայն խոհեմութեամբ եւ մեծանձնութեամբ պատասխանեց, որ մենք այսպիսի կարգադրութիւններ այժմ չենք ըներ:*

---

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԽՄԲԱԳԻՐ

Հ. ՌԱՓԱՅԷԼ Վ. ՊԱՐՈՆՉ

ՎԻԷՆՆԱ, ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ (W. HEINRICH)

digitised by A.R.A.R.@